Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
նոյեմբերի 26-ի N 1721 - Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՈՂ ԿԱՅՔԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՅՔԵՐԻ ՑԱՆԿԻ ՎԱՐՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՈՒ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի հայտնաբերման, ուսումնասիրության, նույնականացման, արգելափակման ենթակա կայքերի ցանկի ձևավորման և վարման, դրանց հասանելիության սահմանափակման, այդ կայքերի և դրանց պատկանող բոլոր ապրանքային նշանների միջոցով խաղային գործունեության կազմակերպման նպատակով դրամական միջոցների ստացման և փոխանցման գործարքների սահմանափակման, ինչպես նաև պետական մարմինների, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների, առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունները՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների և արգելքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

2. Սույն կարգով՝

2.1. Վերահսկող մարմինը՝

1) իրականացնում է համացանցի և բաց աղբյուրների մշտադիտարկում, հայտնաբերում և ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետությունում համապատասխան լիցենզիայի բացակայության պայմաններում խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերը.

2) Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիայի բացակայության փաստի հայտնաբերումից հետո համակարգում ներառում է կայքի վերաբերյալ տվյալները.

3) հաստատում է համակարգում ներառված՝ արգելափակման ենթակա կայքերի տվյալները, որոնք հաստատվելու պահից հասանելի են դառնում համապատասխան պետական մարմիններին, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորներին, առևտրային բանկերին և վճարահաշվարկային կազմակերպություններին.

4) հաստատում է լիազոր մարմնի կողմից համակարգի լիցենզավորված կազմակերպիչներ դաշտում մուտքագրված տվյալները: Վերահսկող մարմնի կողմից հաստատման պահից տվյալները հասանելի են դառնում պետական մարմիններին, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորներին, առևտրային բանկերին և վճարահաշվարկային կազմակերպություններին.

5) վերահսկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորների կողմից սույն կարգով սահմանված պահանջների կատարման գործընթացը:

2.2. Ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորները սահմանափակում են համակարգում ընդգրկված և հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի հասանելիությունը՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

2.3. Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերը և վճարահաշվարկային կազմակերպությունները ապահովում են Հայաստանի Հանրապետությունում

չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի, ինչպես նաև դրանց պատկանող բոլոր ապրանքային նշանների միջոցով խաղային գործունեության կազմակերպման նպատակով դրամական միջոցների ստացման և փոխանցման գործարքների սահմանափակումը՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված պահանջներով և ժամկետներում:

3. Միաժամանակ գործարքների սահմանափակման հիմք են համակարգում մուտքագրված և հաստատված՝ չլիցենզավորված կազմակերպիչների կայքերի և դրանց պատկանող ապրանքային նշանների վերաբերյալ տվյալները: Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված վճարահաշվարկային կազմակերպություններն ապահովում են Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված խաղային կազմակերպիչների օգտին վճարների կատարումն արգելելը՝ համապատասխան քարտային համակարգի կողմից սահմանված խաղային բիզնես գործունեության նույնականացման ծածկագրի՝ առևտրային կազմակերպությունների գործունեության կոդի (MCC (Merchant Category Code)) միջոցով:

4. Սույն կարգում կիրառվող հասկացությունները կիրառվում են «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով, «Լիցենզավորման մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստներով:

2. ՉԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱՅՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5. Վերահսկող մարմինը Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի հայտնաբերումն իրականացնում է մշտադիտարկման, պետական մարմիններից ստացված տեղեկատվության, միջազգային համագործակցության շրջանակներում ստացված տվյալների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա:

6. Կայքը համարվում է չլիցենզավորված կազմակերպչի կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայք, եթե միաժամանակ առկա են հետևյալ հանգամանքները՝

6.1. խաղային գործունեության կազմակերպիչը Հայաստանի Հանրապետությունում չունի համապատասխան լիցենզիա.

6.2. կայքի միջոցով առաջարկվում են խաղեր՝ շահումով խաղ, ինտերնետ շահումով խաղ, բուքմեյքերային գործունեության միջոցով կազմակերպվող խաղ, վիճակախաղ.

6.3. կայքի միջոցով հնարավոր է գրանցվել և համալրել խաղային հաշիվը, կատարել խաղադրույք (մասնակցության վճար), մասնակցել խաղերին:

7. Սույն դրույթները տարածվում են նաև այն կայքերի վրա, որոնք խաղային գործունեություն իրականացնող այլ հարթակների հայելային կամ փոխարինող տիրույթներ են:

3. ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՅՔԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՎԱՐՈՒՄԸ, ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

8. Վերահսկող մարմինը վարում է արգելափակման ենթակա կայքերի ցանկը՝ համակարգի միջոցով:

9. Համակարգում ներառվում են արգելափակման ենթակա կայքերի՝

9. 1. տիրույթային անվանումը (domain name).

9.2. հայելային տիրույթային անվանումները (mirror domain names).

9.3. կազմակերպչի անվանումը՝ առկայության դեպքում.

9.4. ապրանքային նշանը՝ առկայության դեպքում.

9.5. խաղային գործունեության տեսակը.

9.6. համակարգում ներառման ամսաթիվը.

9.7. համակարգում հաստատման ամսաթիվը.

9.8. այլ տվյալներ (տեխնիկական բնույթի):

10. Համակարգում արգելափակման ենթակա կայքերի վերաբերյալ տվյալները վերահսկող մարմնի կողմից հաստատման պահից հասանելի են դառնում լիազոր մարմնին, ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորներին, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերին և վճարահաշվարկային կազմակերպություններին:

11. Ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորները իրականացնում են արգելափակման ենթակա կայքերի հասանելիության սահմանափակում կամ սահմանափակման դադարեցում՝ համապատասխան տվյալների հասանելի դառնալու պահից ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերը և վճարահաշվարկային կազմակերպությունները իրականացնում են չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության կազմակերպման նպատակով դրամական միջոցների ստացման և փոխանցման գործարքների սահմանափակում կամ սահմանափակման դադարեցում՝ համապատասխան տվյալների հասանելի դառնալու պահից ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

26.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ